

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻՔԱՅԷԼ ԹՈՒՍՏԵՒ ԳՐԻՉ

(1606 — 1638)

Ժե. Դարու առաջին կեսին (1606 — 1638), Կո Պոլսոյ մէջ իբրեւ բաղամարդիւն գրիչ յայտնի էր Միքայէլ Թոսասցի: Ծնած է ԺԶ. Դարի վերջերս: Ամուսնացեալ անձ մըն էր, բայց շուտով զրկուած է իր սիրելիներէն: Կենակիցը մեռած է արդէն 1628 ին. կը մեռնի 1635 ին հնգհաւատամեայ որդին Քրիստոսոստըն ալ: Այդ առթիւ սգաւոր հայրը կը գրէ. «Տղա հասակաւ փոխեցաւ առ Քրիստոս, և ես մնացի չար գլուխ միաւոր: Վայ ինձ հազար բերան»։ — Թիշա. Ժե. Դարի, Բ. Հատոր, էջ 620:

Աւելի քան երեք տասնամեակներու միջոցին Միքայէլ օրինակած է քսան հաւելի կրօնական գիրքեր — 10 Աւետարան, 7 Շարականոց, 2 Մաշտոց, 2 Աստուածաշունչ, և 1 Սաղմոսարան — որոնց մեծագոյն մասը հասած է մեր օրերուն:

Ստորեւ կը ներկայացնենք իր գրչին արդիւնքները՝ Թուականի կարգով.

1 — Շարականոց, 1606 ին, «Ք վայելու մէր Պետրոսին»։ — Թիշա. Ժե. Դարի, Ա. Հատոր, Թիւ 2984 Յ. Nat., No. 71:

2. — Մաշտոց, 1609 ին, «Ի գուռն կոմրուկի Ս Նիկողայոսին», «Ի վայելու մեղակալի տէր Միքայէլին»։ — Թիշա. Ժե. Դարի, Ա., Թիւ 424:

3. — Աւետարան, 1609 ին, «Ի գուռն Ատրանու Ս. Նիկողայոսին», «Ի վայելու միտաս Վարդապետին Թեոդոսիոսին»։ Մաղկոզ՝ Լազար Քահնայ. — Թիշա. Ժե. Դարի, Ա., Թիւ, 439:

4. — Մաշտոց, 1611 ին, «Ի գուռն Սրբոյն Գեորգայ Զաւարադի», «Բոթանեացի Եակոբ արքեպիսկոպոսի փափաքով»։ — Թիշա. Ժե. Դարի, Ա., Թիւ 547: Զեռ. Վենետիկի, Թիւ 398 (940):

5. — Աստուածաշունչ, 1611 ին, «Ի վայելու մեղակալի Միքայէլ Վարդապետին»։ — Թիշա. Ժե. Դարի, Ա., Թիւ 504: Զեռ. Երեւանի, Թիւ 186:

6. — Սաղմոսարան, 1612 ին, «Ի վայելու մեղակալի տէր Պոլոս Ժանային»։ — Թիշա. Ժե. Դարի, Ա., Թիւ 587: Զեռ. Վենետիկի, Թիւ 685:

7 — Աւետարան, 1615 ին. — Թիշա. Ժե. Դարի, Ա., Թիւ 745: Զեռ. Ս. Թ., Թիւ 32594:

8. — Աւետարան, 1618 ին, Ստացող՝ Մաղկոս Աւետիք. — Թիշա. Ժե. Դարի, Ա., Թիւ 874: Զեռ. Երեւանի, Թիւ 7576:

9. — Աւետարան, 1619 ին, Ստացող՝ Կարապետ և իր երեք եղբայրները. — Թիշա. Ժե. Դարի, Ա., Թիւ 960: Զեռ. Վենետիկի, Թիւ 120:

10. — Աւետարան, 1620 ին, Ստացող՝ Եակոբ Արեղայ՝ Եկեղեցի գաւառէն. — Թիշա. Ժե. Դարի, Ա., Թիւ 985: Զեռ. Երեւանի, Թիւ 3472:

11. — Աւետարան, 1620 ին, Ստացող՝ Աստուածատուր Գին. Տիւրիկցի. — Թիշա. Ժե. Դարի, Ա., Թիւ 1025:

12. — Աւետարան, 1621 ին, «Ի վայելու մեղակալի տէր Աստուածատուրին»։ — Թիշա. Ժե. Դարի, Բ. Հատոր, Թիւ 39: Զեռ. Երեւանի, Թիւ 10375:

13. — Աստուածաշունչ, 1625 ին. — Թիշա. Ժե. Դարի, Բ., Թիւ 248:

14. — Աւետարան, 1625 ին. — Զեռ. Ս. Թ., Թիւ 2637:

15. — Շարականոց, 1626 ին, նուէր ստացող՝ Լազար: Նուէրողներ՝ «Ի կամխայ՝ ի յԱրմենիցն ի գեղջէն՝ Ոմրիկն և իր եղբայրները, ի յԻստակ իրենց շամհնայն արեան մերձաւորացն»։ — Թիշա. Ժե. Դարի, Բ., Թիւ 314: Զեռ. Երեւանի, Թիւ 1599:

16. — Շարականոց, 1628 ին, Ստացող՝ Տիւրու. — Թիշա. Ժե. Դարի, Բ., Թիւ 424: Զեռ. Երեւանի, Թիւ 8534:

17. — Աւետարան, 1628 ին, Ստացող՝ Մելիք Երեւանցի, որդի Ամիրայէկի. —

Յիշա. Ժէ. Դարբի, Բ., Թիւ 436: Ձեռ. Երեւանի, Թիւ 291:

18. — Աւետարան, 1628 թն, չի վայելում: Սիմէոն քահանայի և տէր Յովանիսի. — Յիշա. Ժէ. Դարբի, Բ., Թիւ 450: Ձեռ. Երեւանի, Թիւ 10380:

19. — Շարականոց, 1629 թն. չի գտնուում: Ս. Սարգսի. — Յիշա. Ժէ. Դարբի, Բ., Թիւ 480:

20. — Շարականոց, 1635 թն. — Յիշա. Ժէ. Դարբի, Բ., Թիւ 912:

21. — Շարականոց, 1636 թն, Կ. Պոլիս. — էջմիածին, 1987, Թիւ Ե-Ձ, էջ 78-79:

22. — Շարականոց, 1638 թն. — Յիշա. Ժէ. Դարբի, Բ., Թիւ 1079: Ձեռ. Երեւանի, Թիւ 4319:

ՅԱԿՈԲ ՎՐԴ. ԿՐԱԿԱՍՅԻ

(1270? — 1335?)

Յակոբ Վրդ. Կրակասի ծնած է ԺԴ. Դարու երրորդ քառորդին վերջերը հաւանաբար: Կիլիկիոյ Գերմաղրիսի վանքի դասատան վարժապետներէն էր: Սելւոյն քաղաքի և Երզնայի:

Յակոբ Կրակասի, գեա ևս չապաստուոր բանին, Կարեւոր բովանդակութեամբ Դարողգիրք մը ընդօրինակած է իրեն համար: Ժողովածուն կը պարունակէ 33 քառոցներ, ընդհանրապէս իրեն ժամանակակից Կաշ Կեղիսիաներէ, ինչպէս՝ վանքաւ վարդապետ, Ներսէս վարդապետ, Յովնանէս վարդապետ Պիւղ, Եսայի վարդապետ, Յովնանէս Եսայ. Աւրպէլի, և Գրիգոր Վրդ. Սկուեցի:

Ան 1328 թուին ստացած է Փիլոն Երայեցւոյ գրոց մէկ ժողովածուն, որուն

մէջ արձանագրած է Կարեւոր յիշատակարան մը, ուր կ'ըսէ. «Ես Կարեւոր և Բաղժմովեղ Կաշի Յակոբ, Կրակասի քահանայի և յետինս վարժապետաց, ի քաղաքէն Կրակասի կոչեցեալ . . . Հոգոյն ձեռնադրութեամբ և ըստ անձին իմոյ բաղժանաց ետու գրել զեօթն տասն իմաստասիրական, որ է Կարեւորեալ յեռման իմաստասիրէն Փիլոնի: Սղե զբաւ զընդունին սորա ի վանքս, որ կոչի Գերմաղրիս, և է այժմ դասաւանդական Կարեւոր ի Թաղաւորէն Հայոց Զորքորդ Կեղիսի և ի Թաղապարիս և պալլին Հայոց Աւրպէլի, տէր Կաշի Կրակասի, ձեռամբ Առաքելի՛ սրբաւսէր և կուսակրան քահանայի . . . »: — Յիշա. ԺԴ. Դարբի, Թիւ 264: Ձեռագիրք Երեւանի, Թիւ 2057:

Յակոբ վարդապետի գրական երկերէն կրնանք յիշել հետեւեալները:

1. — Աղօթադիրք, խորագիր, «Յակոբայ վարդապետի Կրակասցւոյ բաղժմովեղի անձին շարադրեալ բանս աղօթական, ըստ եօթն աւուրց շարաթու, զոր ի սրբոցն քանից ասի, և է որ ի մէնջ, և յարմարեցի ամենայն աւուր առանձին աղօթք»: — Ձեռ. Ս. Յ., Թ. 1462, Թղ. 58ա - 108բ:

2. — Լուծմունք Հարցոցացն Բարադի. կը գտնուի Երեւանի Թիւ 598 (Թղ. 1303) և Թիւ 1480 (Թղ. 1617) ձեռագիրքներուն մէջ:

3. — Լուծմունք Ճապից Գր. Առաքելաւորանի. կը գտնուի Ս. Յակոբեանց Թիւ 1257 ձեռագրին մէջ, Թուական՝ 1322:

4. — Լուծմունք Դժուարիմաց Բանից Նիսանցւոյն. կը գտնուի Ս. Յակոբեանց Թիւ 718 ձեռագրին մէջ, էջ 532-556:

Ն. ԱՐԲ. ԵՈՎԱԿԱՆ

